

## Համահայկական 2-րդ գիտաժողովի շրջանակում կլոր սեղան տեղի կունենա մասնավոր ներդրողների հետ

<https://news.am/arm/photos/session/969.html>

Համահայկական 2-րդ գիտաժողովի շրջանակում, որը մեկնարկել է նոյեմբերի 6-ին Երևանում, տեղի կունենա կլոր սեղան, որի շուրջ կհավաքվեն ոչ միայն գիտնականները, այլ նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչները: Լրագրողների հետ զրույցում այս մասին հայտնեց Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի ներկայացուցիչ, գիտաժողովի կազմակերպիչներից Գեորգ Վարդանյանը: Կլոր սեղանը տեղի կունենա նոյեմբերի 8-ին:

Գեորգ Վարդանյանը նշեց, որ կլոր սեղանի նպատակն է գիտության եւ մասնավոր հատվածի համագործակցության ստեղծումը՝ դրանով նպաստելով գիտության առևտրայնացմանը:

Նրա խոսքով՝ Հայաստանում այսօր փոքր թիվ չեն կազմում հեռանկարային գիտական մշակումները, որոնք հնարավոր է վերածել լավ բիզնես ծրագրերի եւ ներդրողներին ներկայացնել:

Հայաստանում գիտական նախագծերում մասնավոր հատվածը ներդրումներն այնքան էլ ակտիվ չի կատարում, սակայն կլոր սեղանի շրջանակում քննարկումները եւ հայկական ծագմամբ գիտնականների հաջող փորձին ծանոթացումը կարող է ցույց տալ, որ, հնարավոր է, մասնավոր հատվածին անչափ ձեռնտու լինի գիտական նախագծերում ներդրումներ կատարելը եւ դրանցից շահույթ ստանալը: